

«Կրթություն առանց սահմանի»-ՀԿ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեման՝ Միջառարկայական
կապեր և բազմառարկայական
ինտեգրում մայրենիի դասերին

Հետազոտող ուսուցիչ՝ Ղազարյան Անահիտ

Դպրոց՝ Սմբատ Բյուրատի անվան №125 հիմնական դպրոց

Վերապատրաստող՝ Բաբաջանյան Վերոնիկա

Երևան - 2022

Բովանդակություն

Ներածություն _____	1
Ինֆորմատիկայի ինտեգրումը մայրենիի դասերին _____	6
Մաթեմատիկայի ինտեգրումը մայրենիի դասերին _____	10
Երաժշտության ինտեգրումը մայրենիի դասերին _____	11
Կերպարվեստի ինտեգրումը մայրենիի դասին _____	12
Տեխնոլոգիայի ինտեգրումը մայրենիի դասին _____	14
<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ինտեգրումը մայրենիի դասին _____	15
Եզրակացություն _____	18
Օգտագործված գրականության ցանկ _____	19

Ներածություն

Մեր բոլոր երազանքները կարող են իրականանալ, եթե խիզախություն ունենանք դրանք զարգացնելու:

Ուոլթ Դիսնեյ

Այսօր դժվար է պատկերացնել աշակերտների բազմակողմանի զարգացման և համակողմանի դաստիարակության իրականացումը առանց միջառարկայական կապերի օգտագործման, առանց երեխաների հետաքրքրությունների բարձրացման ու ինքնուրույն զարգացման: Մեզ շրջապատող աշխարհում բոլոր առարկաներն ու երևույթները գտնվում են անխզելի կապերի մեջ: Այս առումով աշխարհն, իրերն ու երևույթները միասնական են: Հենց այս միասնականության մեջ էլ երեխան ընկալում է աշխարհը, թափանցում նրա էության մեջ՝ միշտ աչքի առջև ունենալով ամբողջությունը, որը և ծնել է միջառարկայական կապերի օգտագործման անհրաժեշտությունը: Այն ամենից շատ ու ամենից արդյունավետ ձևով կարելի է իրականացնել մայրենի լեզվի դասերին, մայրենի լեզվի միջոցով, մայրենի լեզվի միջամտությամբ:

Ուսումնական աշխատանքում ամեն մի միջոցառում իր որոշակի տեղն ու դերը պետք է ունենա և՛ ժամանակի, և՛ գործադրության տեղի ու ձևի առումով, այլապես այն կդառնա ինքնանպատակ, չի դառնա նրա կայուն բաղադրիչը:

Եթե միջառարկայական կապերը հեշտ ու տեղին, չափավոր ու նպատակային չօգտագործվեն, ակամա դրանք կարող են դասի պրոցեսի հիմնական մեխը դառնալ և դասի բուն նպատակը մղել երկրորդ պլանի վրա, դարձնել անկարևոր: Գիտելիքների ձեռքբերումը և կարողությունների ձևավորումը սերտորեն կապված են միմյանց հետ և մեկը մյուսի համար հիմք ու ելակետ է: Հետևաբար, երեխաներին շրջապատի աշխարհի մասին հնարավորին չափ բազմակողմանի ու ընդարձակ տեղեկություններ տալը, ուրիշ գիտելիքների հետ կապի մեջ դնելը, դրանք շրջանառության մեջ պահելը կարևոր ու վճռող

նշանակություն ունի երեխաների աշխարհաճանաչողության համար: Սակայն դասի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի՝ դասին լավ պատրաստված լինելով, այլև սովորողների՝ ուսման հանդեպ ունեցած մոտիվացմամբ: Իսկ երեխային հետաքրքրելու ու նրան ակտիվ ուսումնառության մեջ ներգրավելու լավագույն միջոցը սովորողների հետաքրքրությունից և նախասիրությունից բխող ուսումնական պրոցեսի կազմակերպումն է: Ժամանակակից մանկավարժագիտության մեջ ինտեգրումը սովորողի կողմից կրնկրետ որևէ երևույթի կամ բնագավառի ամբողջական ընկալման ձևավորումն է, որն իրականացվում է մասերը մի ամբողջի մեջ միավորելու և շրջապատի ու բնության երևույթների վերաբերյալ համապարփակ ու ամբողջական պատկերացում ձևավորելու ճանապարհով: Մայրենիի միասնացված յուրաքանչյուր դասի ընթացքում ուսուցիչը պիտի ապահովի գիտելիքի ինտեգրման բազմաթիվ դրվագներ: Այդ ինտեգրումը կարող է հանդես գալ ինչպես ներառարկայական, այնպես էլ միջառարկայական կապերի դրսևորմամբ: Վերջինիս ապահովումը լայն հնարավորություն է բացում աշակերտի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար, քանի որ ժամանակակից պատկերացմամբ դպրոցը երեխային ոչ միայն պետք է սովորեցնի մտածել և գրագետ խոսել, այլև իմացածը կյանքում կիրառել: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև 12 տարեկան երեխան դեռևս ֆիզիկապես և հոգեպես բավարար չափով պատրաստ չէ երևույթներն անջատ-անջատ ընկալելու: Քանի որ սա հենց այն տարիքն է, երբ երեխան սկսում է զգալ իր բարոյական էությունը, սկսում է ձևավորվել երեխայի անձը, հետևաբար ինքն իրեն ճանաչելով մարդկանց հետ ունեցած կենդանի հարաբերություններով, իրականության մեջ աստիճանաբար իր տեղը փնտրելով, նոր ապրումներ ու զգացողություններ ունենալով է, որ պիտի գիտակցի իր ով լինելը : Վիզուալու պատկերավոր խոսքով ասված՝ երեխայի հետաքրքրությունը համապատասխան չափով և պահանջված ժամանակահատվածում ձեռք բերած գիտելիքը կարելի է համարել «բարենպաստ ջերմաստիճան»: Ըստ հայտնի մանկավարժի՝ ինչպես մարդու բնականոն ջերմաստիճանը 36,6 աստիճանն է, և երբ այն բարձրանում է, կարող է խանգարվել նրա նորմալ կենսագործունեությունը, այնպես էլ երեխայի «կրթական ջերմաստիճանը» պետք է պահել խելամիտ չափի սահմաններում, այլապես կարող են խաթարվել ուսման նկատմամբ նրա սերն ու ձգտումը, ֆիզիկական և

հոգևոր զարգացումը : Ասվածից պարզ է դառնում, որ մայրենիի բովանդակությունն ու կառուցվածքը, սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված, ենթադրում են զուտ գործնական ուղղվածություն երեխայի հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակներից բխող ուսումնական բնագրի վրա տարվող աշխատանքներով: Միասնացված (ինտեգրված) ուսուցմամբ տարվող աշխատանքը սովորողների առաջ բացում է գիտելիքների ու հմտությունների ձեռքբերման և դրանց կիրառման նոր հնարավորություններ: Մյուս կողմից էլ՝ մայրենիի միասնացված ուսուցմամբ լայն հնարավորություն է բացվում սովորողի սոցիալական հմտությունների զարգացման համար՝ նրան վարժեցնելով հետազոտական, ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ կատարելու: Նշված սկզբունքով ուսուցման նպատակներին հասնելու համար ժամանակի հրամայական է դառնում նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությունը և՛ ներառարկայական, և՛ միջառարկայական ինտեգրման շրջանակում: Ինտեգրմանը զուգահեռ ուսուցման արդյունավետությանը խիստ նպաստում է հարակից առարկաների, արվեստի ճյուղերի համադրմամբ նյութի մատուցումը:

Նյութի դասավանդման ընթացքում ուսուցիչն իր ուսուցման զինանոցում պիտի ամբարի ու ժամանակին օգտագործի միջառարկայական ինտեգրման հնարավորությունները՝ ուսուցման ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների ճիշտ և տեղին գործադրմամբ՝ միշտ շեշտը դնելով գործնականության և ակտիվության սկզբունքի վրա: Մայրենիի դասագրքերում ինտեգրված դասանյութերը ուսուցչի ստեղծագործական մտքի դրսևորման համար լայն ասպարեզ են բացում, քանի որ յուրաքանչյուր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչն ինքն է որոշում, թե տվյալ բնագրի շրջանակներում ինչ տիպի ինտեգրում պիտի կազմակերպի՝ դրանով իսկ պարարտ հող նախապատրաստելով ակտիվ ուսումնառության համար:

Կրտսեր դպրոցում ինտեգրված ուսուցման կազմակերպումն ունի իր առանձնահատկությունները, որոնք էլ որոշում են այդ գործընթացի մարտավարությունը: Դրանք առաջին հերթին պայմանավորված են այդ տարիքի երեխաների տարիքահոգեբանական առանձնահատկություններով: Սովորաբար

ուսուցիչները դժվարանում են ինտեգրված բովանդակությունը հասկանալի ու հետաքրքիր ներկայացնել կրտսեր դպրոցականին: Կան նաև այնպիսի գործոններ, որոնք հեշտացնում են այդ դժվարությունների հաղթահարումը: Դրանցից մեկն այն է, որ կրտսեր դպրոցում առարկաների հիմնական մասը դասավանդում է նույն ուսուցիչը: Բարենպաստ գործոն է նաև այն, որ ինտեգրումը երեխային իր մտավոր ներուժը զարգացնելու մեծ հնարավորություն է ընձեռում: Ինտեգրված դասերի կազմակերպումն ու անցկացումը կրտսեր դպրոցում կրթության բարեփոխման ու կատարելագործման նոր ուղղություններից մեկն է: Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով`

- հստակությամբ, ուսումնական նյութի սեղմությամբ,
- տրամաբանական փոխապայմանավորվածությամբ,
- ուսումնական նյութի տեղեկատվական մեծ տարողությամբ:

Նման դասերի պլանավորման համար ուսուցիչը նկատի է ունենալու հետևյալ պայմանները.

- ինտեգրված դասին գիտելիքներ են հաղորդվում տարբեր առարկաներից: Այստեղից էլ պետք է որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը:
- Եթե որոշված է ընդհանուր նպատակը, ապա առարկաների բովանդակությունից ընտրվում են միայն այն տեղեկույթները, որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար: Ինտեգրված դասի պլանավորման ժամանակ պետք է հստակ ընտրել դասի տեսակը, կառուցվածքը, ուսուցման մեթոդները, ինչպես նաև որոշել սովորողների բարեհարմար ծանրաբեռնվածությունը` գործունեության տարբեր ձևերով : Աշխատանքում, կարևորելով ինտեգրված թեմատիկ միավորի նշանակությունը, նշվում է, որ այն`
- զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները,
- զարգացնում է ուսուցիչների տեսական և գործնական հմտությունները,
- ձևավորում և զարգացնում է ուսուցիչների ստեղծագործական խմբերը,
- զարգացնում է ուսուցիչ-աշակերտ համագործակցային խմբերի աշխատանքը,

- պլանավորում, կազմակերպում և իրականացում է աշակերտների բազմապիսի արտադասարանական-դաստիարակչական աշխատանքների ծրագրերը,

- աշակերտների կարողություններին համապատասխան կազմակերպում է ուսուցումը:

Հանրապետության հանրակրթական դպրոցներում լիարժեք ինտեգրված ուսուցման անցնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները:

- ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ռեսուրսների ստեղծում (գրադարանային ֆոնդ, համակարգչային կենտրոն և այլն) :

- Ժամանակակից պահանջներից բխող բարձր որակավորում ունեցող ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում:

- Համագործակցային ուսուցման ճիշտ կազմակերպում:

- Դիդակտիկ նյութերի ապահովում:

- Ուսումնական գործընթացի օպտիմալ կառուցվածքի ձևավորում:

Ինֆորմատիկայի ինտեգրումը մայրենիի դասերին

Առաջադրանքները, որոնք չեն բխում երեխաների՝ տարիքային խմբին հետաքրքրող նախասիրություններից, ժամանակակից երեխային զարգացնող թեմաներից, ուստի դրանց հանձնարարումը աշակերտների համար դառնում է ձանձրալի և ոչ այնքան օգտակար զբաղմունք: Կարծում ենք՝ այս բացն անհրաժեշտ է լրացնել այժմ կրթության մեջ լայն կիրառում գտած ու ժամանակի հրամայական դարձած կրթական գործիքներից մեկի՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների՝ լեզվական նյութի հետ ինտեգրելու միջոցով: Մայրենիի միասնացված դասերին լեզվական նյութի արդյունավետ յուրացման լավագույն գործիքներից մեկը S<S-ների գործադրմամբ ինտեգրման ապահովումն է: Փորձը ցույց է տվել, որ լեզվական նյութի ուսուցման ժամանակ համակարգիչների կիրառումը ոչ միայն տեղին է ու նպատակահարմար, այլև ուսուցման այս ձևի հիմքում դրվում են երեխայի հետաքրքրությունն ու դրա բավարարման ժամանակակից պահանջմունքը: Այս տեսակետից բացառիկ են ինտեգրման մեթոդով ստեղծված համակարգչային խաղերն ու վարժությունները, որոնք թույլ են տալիս երեխայի մեջ զարգացնել վերացական, տրամաբանական, օպերատիվ մտածողություն, վերլուծելու և կանխատեսելու հստակ հնարավորություններ տարբերություն կինոնկարների և հեռուստատեսության՝ համակարգչային խաղերով խաղացողը դառնում է գործողությունների մասնակից և ինքն է որոշում դեպքերի հետագա ընթացքը: Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման մեջ դառնում է մշակույթի իրական մասնիկ, և ժամանակակից դպրոցներում դրանց ներդրումը պարտադիր է ու անխուսափելի: Այսպիսով, մայրենիի միասնացված դասերի ինտեգրման առանցքում առաջնահերթությունը պիտի տրվի սովորողի սոցիալականացմանն ուղղված առաջադրանքներին, քանի որ այդ կերպ կազմակերպված ուսումնառությամբ յուրաքանչյուր սովորողի յուրացրած գիտելիքները դառնում են անձի ձևավորման և կայացման կարևոր նախապայման: Ուստի ինտեգրման մեթոդաբանությամբ ուսուցանվող մայրենիի միասնացված բնագրերը դադարում են զուտ պասիվ ուսումնական նյութ լինելուց, քանի որ դրանք ուսուցչի երևակայական մտածողությունը գործի դնելու, լեզվական կենդանի օրինակներ մտածելու և ուսումնական որոշ առարկաների հետ ինտեգրելու միջոցով լայն հնարավորություն

են ընձեռնում յուրաքանչյուր աշակերտի արդիական պահանջմունքներից բխող ուսուցում կազմակերպելու համար:

Մեր օրերում մեր կյանքի բոլոր ոլորտները կապված են ՏՀՏ-ի հետ: Տեղեկատվական տեխնոլոգիաների հսկայական կիրառում է առաջանում ամբողջ աշխարհում: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) կարող են ազդել սովորողների ուսման վրա, երբ ուսուցիչները հասկանում են, թե ինչպես այն ինտեգրել ուսումնական ծրագրին: Համակարգչի հայտնագործմամբ մարդկային կյանքը կտրուկ փոխվել է: Փոփոխություններն անդրադարձել են նաև կրթության վրա: Դպրոցներում դասապատրաստման գործընթացն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Մեր օրերում համակարգչային տեխնոլոգիաներն անփոխարինելի են դպրոցներում պարապմունքների ժամանակ, քանի որ դրանք հնարավորություն են տալիս վերակենդանացնել դասը, հետաքրքրություն առաջացնել առարկաների նկատմամբ, նպաստել կրթության որակի բարձրացմանը, կրթության մատչելիության բարձրացմանը և առաջնորդվող մարդու զարգացմանը: Տեխնոլոգիաները կրթության մեջ ինտեգրելով՝ մանկավարժները նպատակ ունեն առաջացնել մանկավարժական փոփոխություններ և լուծել հիմնարար խնդիրները: Հետևաբար, տեխնոլոգիան կարող է դիտվել որպես փոփոխությունների և՛ գործիք, և՛ կատալիզատոր: Տեխնոլոգիան պետք է ներթափանցի ցանկացած առարկա՝ ուսումնական նյութն առավել կենդանի և հետաքրքիր դարձնելու համար: Ժամանակակից ուսումը մեծապես հենվում է հենց տեխնոլոգիաների ճիշտ և բազմակողմանի կիրառության վրա: Այս դարում գիտունը և խելացին այլևս նրանք չեն, ովքեր կարող են իրենց գլխում պահել ամբողջ հանրագիտարանը, այլ նրանք, ովքեր լավ գիտեն, թե որտեղից է հնարավոր ստանալ ամենալավ գիտելիքը տվյալ փոքր խնդրի վերաբերյալ:

Համակարգիչը չպետք է լինի դասարաններում հասանելի շրայություն, այն պետք է լինի մի երևույթ, որից կարող ենք օգտվել ցանկացած վայրում, ցանկացած պահի: Հենց տեխնոլոգիան է այն գործիքը, որով այսօր հնարավոր է շրջել մոդելը դեպի սկզբունքը: Ինչպես ճանապարհների դեպքում ամենանոր և գեղեցիկ ճանապարհը ձեզ չի հուշի, թե ուր պետք է գնալ, և ինչ նպատակի համար, այնպես էլ նորագույն համակարգիչներով հագեցած դպրոցը կամ լաբորատորիան ի զորու չեն ցույց

տալու, թե ինչ խնդիրներ են հնարավոր լուծել օգտագործելով դրանք: Այս պարագայում ցանկացած առարկայի ուսուցիչ պետք է լիարժեք տիրապետի այն բոլոր (ծրագրերին, կայքերին, դրանցում առկա ֆորումներին, տեսանյութերին և մասնագիտական ցանցերին), որոնցով հնարավոր է ուսումնական գործընթացը դարձնել հետաքրքիր, ժամանակակից և որակյալ: Սա է մեր դարի ուսուցչի կերպարը, որը ոչ թե սովորեցնում է աշակերտներին, այլ որպես նրանց ավագ գործընկեր, սովորում է աշակերտների հետ և նրանց կողքին՝ ուղղություն ցույց տալով և կողմնորոշելով աշակերտներին տեղեկատվության և գիտելիքների բազմազանության այս ահռելի տիրույթում: Եվ սա լիովին իրագործելի տեսլական է, եթե միայն բոլորս հաճույքով զբաղվենք մեր սիրված աշխատանքով:

Ուսուցիչները և հետազոտողները համաձայն են, որ կրթության հին եղանակը, որը աշխատում է արդեն շուրջ երկու դար, և որի ժամանակ ուսուցիչը կանգնում է գրատախտակի առաջ և դասախոսում, օր օրի դառնում է ոչ բավարար: Նույնիսկ փոքրիկ քայլը՝ օրինակ կրթական որևէ կայք օգտագործելը կվերափոխի մայրենիի դասերը, կօգնի և՛ ուսուցչին, և՛ աշակերտներին ու տեխնոլոգիաներ կիրառելու կամ չկիրառելու մասին մտածելիս պետք է հաշվի առնել այն 5 օգուտները, որոնց հանգեցնում է տեխնոլոգիաների կիրառումը. դա աշակերտներին դրդում է ավելի ակտիվ լինել, ստեղծում է վստահություն, ընդլայնում է փոխհարաբերությունները, զարգացնում է աշակերտների մոտ արագ գործելու կարողությունը, այն դառնում է նորմ, որը ուսուցիչները սկսում են սիրել:

Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մայրենի առարկայի դասավանդման ժամանակակից մեթոդների հրատապ խնդիրներից է: Ինֆորմատիկայի դասարանում մայրենի դաս անցկացնելու փաստը սովորողների մոտ հետաքրքրություն է առաջացնում և ի հայտ է գալիս (թեկուզ արտաքին) մոտիվացիա: Սովորողը զգում է գիտելիքի կարիք: Սովորողը հետաքրքրված է համակարգչի միջոցով նոր նյութ սովորել՝ ստուգելով իր գիտելիքների մակարդակը: Համակարգիչը կարող է օգտագործվել ուսուցման բոլոր փուլերում՝ նոր նյութ բացատրելիս, ամրագրում, կրկնություն, գիտելիքների, հմտությունների և կարողությունների վերահսկում: Ավելի հեշտ է դառնում որևէ թեմայի մատուցումը, երբ ունես ցուցադրման կամ խաղային տարբեր մեթոդներով կազմված վարժություններ: Այս պարագայում գործի են դրվում աշակերտի ոչ միայն

լսողական և մտավոր կարողությունները, հասկանալու և ըմբռնելու աստիճանը, այլև օգնության են գալիս տեսողական, զգայական, էմոցիոնալ ապարատները, բարձրանում է ուշադրության մակարդակը և հետաքրքրվածությունը: Աշակերտները առանց հասկանալու մտնում են դասի մեջ, նրանք սովորում են խաղալով, ոգևորված՝ չհասկանալով ինչպես ներգրավվեցին դասին: Միաժամանակ աշակերտի համար նա կատարում է տարբեր գործառույթներ՝ ուսուցիչ, աշխատանքային գործիք, ուսուցման օբյեկտ, համագործակցող թիմ, խաղային միջավայր : Ուսուցչի գործառույթում համակարգիչը ներկայացնում է կրթական տեղեկատվության աղբյուր (մասնակի կամ ամբողջությամբ փոխարինում է ուսուցչին և գրքին). տեսողական օգնություն (որակական նոր մակարդակ՝ մուլտիմեդիա և հեռահաղորդակցության հնարավորություններով) : Դասարանում ԱՀ-ի օգտագործումը լավ արդյունքներ է տալիս. օգնում է աշակերտների ճանաչողական գործունեության և առարկայի նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Ջարգացնում է սովորողների տրամաբանական մտածողությունը:

Հետաքրքիր է առաջադրանքի այն ձևը, երբ ուսուցիչը պահանջում է համացանցից SՀS-ների կիրառմամբ ներկայացնել համապատասխան տեղեկատվություն՝ այն զուգորդելով արձակ կամ չափածո հետ, ինչի արդյունքում հնարավոր է դառնում ինտեգրել այս երկու առարկաները:

Մաթեմատիկայի ինտեգրումը մայրենիի դասերին

Երբ առարկան զուգակցվում է այլ առարկաների հետ, դասը դառնում է ինտեգրված, առարկայի դասավանդումն առավել արդյունավետ է դառնում: Բոլոր առարկաներն էլ կապված են իրար հետ, իսկ առարկաների միջև թվացյալ բացակայող կապերն ուղղակի անհրաժեշտ է, որ մենք նկատենք և ուղիներ գտնենք դրանք կիրառելու համար: Ցանկացած լեզվի ուսումնասիրության ժամանակ առնչվում են խոսքի մասերի հետ, այդ թվում՝ թվականների:

Առաջադրանք 1 Գրիր մինչև 20 երկնիչ կենտ թվերը և դրանք դարձրու դասական թվականներ:

Առաջադրանք 2 Լրացրու աղյուսակը՝ քո ընտանիքի անդամների ծննդյան թվերով:


	Ծննդյան թիվը	
Անունը	թվանշաններով	բառերով
Գազիկ	1992	հազար ինը հարյուր իննսուներկու

Երաժշտության ինտեգրումը մայրենիի դասերին

Աշակերտները կարդում են բանաստեղծությունը : Երկրորդ ընթերցումը երեխաները զուգակցում են բառային բացատրական աշխատանքով: Այնուհետև ունկնդրում են Կոմիտասի ստեղծագործություններից մի քանիսը: <<Կաքավիկը >> ունկնդրելու ընթացքում աշակերտներին տրվում են թղթեր և հանձնարարվում է նկարել որևէ քառատողի պատկերը:



Երբ անցնում են մեծ երգահան Արամ Խաչատրյանի մասին, երեխաները ընթերցում են նյութը, տեղեկություններ են հաղորդում նրա մասին: Այնուհետև ունկնդրում են Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից:



Համո Սահյան <<Գարուն է գալիս>> բանաստեղծությունը վերածվել է երգի:

Դասն ավելի հետաքրքիր և տպավորիչ է դառնում, երբ ընթերցելուց և արտասանելուց հետո երեխաները լսում են երգը, հետո իրենք են երգում:

Հովհաննես Թումանյանի << Աշուն>> բանաստեղծությունը վերածվել է երգի:

Նյութի յուրացումն արդյունավետ է դառնում, եթե երեխաները լսում են երգը և երգում են:

Մայրենիի դասագրքերում կան բանաստեղծությունները, որոնք երգի են վերածվել, որոնք հնարավոր չէ ուսումնասիրել առանց երաժշտությունն ունկնդրելու, ստացած տպավորությունները մեկնաբանելու: Երաժշտության ազդեցությամբ նյութի յուրացումը անասելի արդյունավետ է դառնում, քանի որ ստեղծվում է զգացմունքային տրամադրվածության անկաշկանդ հոգեբանական մթնոլորտ, ուր գործի են դրվում երեխաների զգայարանները:

Ինչ խոսք, մայրենիի դասագրքերում ինտեգրված դասանյութերը ուսուցչի ստեղծագործական մտքի դրսևորման համար լայն ասպարեզ են բացում :


Դասագրքերում կան այնպիսի դասանյութերը, որոնք հնարավոր չէ անցնել առանց աշխարհագրության ,պատմության հետ միջառարկայական կապեր ստեղծելու: Օրինակ՝ Վրեժ Իսրայելյան << Չնվաճված աշխարհամաս>>, Վաս <<Գեղարդ>> :

Կերպարվեստի ինտեգրումը մայրենիի դասին

ինտեգրման մեթոդով կերպարվեստի հետ միջառարկայական կապ հաստատելով՝ նպաստում ենք սովորողների կողմից նյութի տեսանելի զգայական ընկալմանը. աշակերտը կարդում է հատվածաբար, այն վերածում նկարի, ընտրում բնագրից բխող գույներ, ավելացնում ստեղծագործական ինքնուրույն երանգներ, բանավոր խոսքով հիմնավորում նկարն ու բնագիրը:

<< Սարյանի նկարներում շողշողում է Հայաստանի հավերժությունը>> դասանյութն անցնելիս երեխաները դիտում են Մարտիրոս Սարյանի նկարները, որոշում են՝ որ գույնն է գերիշխում նրա նկարներում և ինչու:

Աշակերտները պատկերացնում են, թե իրենց ձեռքին է Սարյանի ներկապանակը և փորձում են այդ գույներով նկարել:



Տեխնոլոգիայի ինտեգրումը մայրենիի դասին

Մանկավարժական փորձը ցույց է տվել, որ ինտեգրված դասեր անցկացնելու հրաշալի հնարավորություն է ընձեռվում, երբ «Տեխնոլոգիա» առարկայի ուսուցումը համադրվում է կերպարվեստի, մաթեմատիկայի, երաժշտության, մայրենիի հետ: Տարրական դասարաններում «Տեխնոլոգիա» առարկան աշակերտների մտավոր, ֆիզիկական, ստեղծագործական և գեղագիտական զարգացման կարևոր միջոց է: Տեխնոլոգիան համալիր գիտություն է, որն ամփոփում է միջառարկայական կապեր՝ խթանելով դրանց ուսուցման արդյունավետության բարձրացումը :

Տեխնոլոգիա առարկան նպաստում է շուկայական տնտեսության պայմաններում սովորողների մասնագիտական կողմնորոշմանը, ձևավորում է բազմակողմանի և ներդաշնակ զարգացած անձ, նախապատրաստում է նրան ինքնուրույն կյանքին: Մայրենիի գործնական աշխատանքներ կատարելիս երեխաներն հաճույքով կատարում են չափումներ, կտրում են և ձևավորում : Պատրաստում են բացիկ, գրում են շնորհավորանք և նվիրում մտերիմներին:



<<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի ինտեգրումը մայրենիի դասին

Կարևորելով էկոլոգիական դաստիարակության, գիտակցության և կրթության դերը կրտսեր դպրոցականների մոտ , հետազոտությունս փորձեցի իրականացնել մայրենիի դասաժամին՝ Պ. Խաչատրյանի «Ծառի խնդրանքը» դասի շրջանակներում, որի հիմնական նպատակն ու էությունը նույնն է ինչն առաջ է քաշված աշխատանքում՝ պահպանել ու սիրել մայր բնությունը և հոգ տանել մեր շրջակա միջավայրի մասին: Նախատեսված հետազոտությունը իրականացրել ենք երկու իրար հաջորդող դասաժամերի ընթացքում :

Առաջին դասաժամի սկզբում աշակերտներին բաժանելով իմ կողմից նախապես կազմված քարտերի միջոցով, նախևառաջ, փորձեցինք ստուգել 4-րդ դասարանի աշակերտների նախնական գիտելիքներն իրենց շրջակա միջավայրի, մայր բնության, մարդու և բնության փոխկապակցվածության և փոխհարաբերությունների, ինչպես նաև դրանցով իսկ պայմանավորված էկոլոգիական կրթության ու դաստիարակության վերաբերյալ: Քարտերը, որոնք նախապես արդեն իսկ կազմել էինք, հանդիսացան գործիք, որի միջոցով կարողացանք կիրառել «հարց-պատասխան» մեթոդը: Հետազոտության համար ընտրել ենք հենց այս մեթոդը, քանի որ կարծում ենք , որ հենց այս մեթոդի միջոցով կարող ենք վերհանել աշակերտների նախնական գիտելիքների պաշարները էկոլոգիական դաստիարակության վերաբերյալ, զարգացնել նրանց մտահորիզոնը, էկոլոգիական գիտակցության մասին ավելի խորը գիտելիքներ տալով նրանց նպաստել մեր հանրապետության համար ավելի բարեկիրթ, ավելի կրթված սերնդի դաստիարակմանը: «Հարց-պատասխան» մեթոդի ընթացքում կիրառվող քարտային աշխատանքի միջոցով, երբ փորձում էինք պարզել աշակերտների նախնական պատկերացումներն ու գաղափարները էկոլոգիական դաստիարակության վերաբերյալ, նրանց առաջադրեցինք հետևյալ հարցերը.

o Ի՞նչ է բնությունը :

o Ինչու՞ են անհրաժեշտ ծառերը :

o Մարդը բնությանը կարող է լինել բարեկամ ,թե՞ թշնամի:

o Ի՞նչ կլինի, եթե ոչնչանան շրջապատի կենդանիներն ու բույսերը :

o Ես ի՞նչ կարող եմ անել շրջակա բնության վիճակի բարելավման համար:

Սրանք հարցեր են, որոնք ոչ միայն կօգնեն մեզ վերհանելու աշակերտների նախնական գիտելիքներն, այլև միջառարկայական կապ հաստատել և «Մայրենի» և «Ես և շրջակա աշխարհ» -ը առարկաների միջև: Աշակերտներին տրվեց 10 բույսերի հարցերին պատասխանելու համար: Այնուհետև հավաքելով աշակերտներին բաժանված քարտերը մենք շարունակեցինք մեր դասընթացը: Օրվա ավարտին, առանց աշակերտների ներկայության, ամփոփեցինք քարտային աշխատանքի արդյունքները: Արդյունքները, ցավոք, այդքան էլ գոհացուցիչ չէին, դրանք պարունակում էին ինչպես դրական, այպես էլ բացասական պատասխաններ: Քանի որ այս թեմային նախատեսված էր երկու դասաժամ, անմիջապես հաջորդող դասաժամին դասի հարցման, դասի ամրապնդման ընթացքում փորձեցինք ևս մեկ անգամ համապատասխան հարցադրումների միջոցով քննարկել, հասկանալ, պարզաբանել արդի բնապահպանական հիմնախնդիրները՝ դրանցում հատկապես առանձնացնելով այն խնդիրները, որոնց հանդիպում ենք մեր իսկ շրջակա միջավայրում:

Որպեսզի երեխաներն ավելի ըմբռնեին մեր քննարկած բնապահպանական խնդիրները, որոշեցինք կիրառելով էքսկուրսիայի մեթոդը՝ մի փոքրիկ էքսկուրսիա կազմակերպել դեպի

դպրոցի մոտակա այգի: Բավականին երկար շրջեցինք այգում, զննեցինք տեղի բնությունը, հատկապես ուշագրավ է այն, որ երեխաները նկատելով, որ այգում բավականին հոծ թվաքանակով ծառեր կտրված էին, այն էլ ոչ սանիտարահիգիենիկ նպատակներով, որոշները չորացած ոչ ճիշտ խնամքի պատճառով, հասկացան, որ այդպիսի վերբերմունքով մարդ արարածը բարեկամ էակից վերափոխվում է բնության համար թշնամու, չէ որ նման անխոհեմ վերաբերմունքով մենք ոչ միայն զրկում ենք մեզ վայելելու բնության գեղատեսիլ ու չքնաղ տեսարաններն, այլև նպաստում ենք, որ մեր շրջակա միջավայրում էլ ավելի խորանան բնապահպանական խնդիրները: Բնությանն ավելի մոտ գտնվելու համար որոշեցինք բնության զրկում կազմակերպել ընդմիջում, խաղեր՝ հանելուկներ կռահելու միջոցով:

Ի՞նչն ենք դուրս հանում տնից ու բակից,

Մաքրում, տանում ենք մեր ոտքի տակից,

Նա պետք չի գալիս իր դուրս հանողին՝

Խառվում է միշտ ավագ ու հողին:

(աղբ)

Կանաչ ու ծփան, անթիվ եղբայրներ,

Թարմացնում են միշտ մթնոլորտը մեր,

Ե՛վ գիրք են դառնում, և՛ կահույք, և՛ տուն,

Մեծ բարեկամ են աշխարհին, մարդուն:

(անտառ-ծառ)

Ընդմիջումն ավարտելուց հետո աշակերտները պատրաստակամորեն և մեծ սիրով հավաքեցին ոչ միայն իրենց սննդի մնացորդները, այլև նույն եռանդով մաքրեցին տարածքը աղբից: Բնության գրկում անցկացնելով հիանալի օր, վայելելով աշնան գեղեցիկ գույները մեծ ոգեշնչմամբ և տպավորություններով ավարտեցինք մեր այդ դասաժամը: Երկրորդ դասաժամի ընթացքում նախորդող դասաժամերի ընթացքում քննարկված և ձեռք բերված գիտելիքների ամրապնդման, էքսկուրսիայի դրական լիցքերով տպավորված աշակերտներին հանձնարարեցի գրել նամակ, վերնագրելով այն՝ նամակ ծառին: Աշակերտներից յուրաքանչյուրը ներկայացրեց և մեկնաբանեց իր նամակը, իսկ վերջում ես էլ կարդացի իմ նամակը՝ ուղղված ծառին :

Առաջարկում եմ ավելի հաճախ բնության գրկում կազմակերպել ուսուցողական բնույթի էքսկուրսիաներ, քանի որ դրանք կօգնեն, որ երեխաներն ավելի մոտ գտնվելով բնությանը սիրեն, հոգ տանեն իրենց շրջակա միջավայրի մասին՝ նպաստելով իրենց ու ապագա սերնդի վաղվա անվտանգ միջավայրի ստեղծմանը:

Եզրակացություն

Տարրական դպրոցում միջառարկայական համակարգի իրականացման համար հնարավոր է երկու մոտեցում՝

1. Թեմատիկ՝ միջառարկայական իմացական խնդիրների, պրոբլեմային հարցերի, առաջադրանքների կատարման համար ուղղորդող մտքերի օգտագործում:
2. Ընդարձակ պրոբլեմային՝ տարբեր ուսումնական առարկաների համար ընդհանուր միջառարկայական հիմնահարցերի առաջադրում և դրանց ընթացիկ լուծում:

Ուսումնական ծրագրի ինտեգրումը «երկնքից իջած» նորամուծություն չէ, սրանում հնից պահպանված շատ բան կա, սակայն ցավոք, ինչպես հաճախ լինում է կյանքում, մարդիկ, հնից կառչելով, դիմադրում են նորին ոչ թե այն պատճառով, որ չեն ընդունում այն, այլ որ սովոր են հինն և չեն ուզում այն կորցնել: Սակայն տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանկավարժության մեջ նորամուծությունները հիմնականում կատարվում են՝ ավելի շատ արդեն եղածին նորն ավելացնելով, քան թե եղածը դուրս մղելով: Եթե ուսուցիչը ինքը չձգտի փոփոխությունների, նրա համար շատ դժվար կլինի աշխատել փոփոխություններին ավելի արագ արձագանքող ու հարմարվող աշակերտների հետ, նույնիսկ այսօր ստեղծված ինտեգրված դասագրքերով: Ինտեգրումն օգնում է աշակերտին կապակցելու տարբեր առարկաներից ստացված տվյալները, հասկացությունները, գործողություններն ու գիտելիքները խուսափելու համար «ուսումնական ծրագրի մասնատումից» և հավասարակշռելու առաջադրանքները: Գիտելիքի և հմտությունների ձեռքբերումն ու ինտեգրումը դեռ ինտեգրացված ուսումնական ծրագրի վերջը չէ: Այն պետք է պլանավորի ու ներդնի ուսուցման համակարգ, որ աշակերտը հասնի արդյունքների: Վերջապես ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս ճկունորեն անցում կատարելու մի առարկայից մյուսին՝ միջառարկայական կապերի արդյունքում ամրապնդելով գիտելիք-կարողություն-հմտություն կապը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 5, Երևան, 2015:
2. Գյուրջինյան Դ. և ուրիշներ, Մայրենի 6, Երևան, 2016:
3. «Հայոց լեզու և գրականություն» ծրագրեր. հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչներ ու ծրագրեր, Երևան, 2007:
4. Մկրտչյան Գ., Միասնացված կրթության անհրաժեշտությունը տարրական և միջին դպրոցներում, Նախաշավիղ 7-8, Երևան, 2009:
5. Սարգսյան Տ., Համակարգչային խաղերը ինտեգրացված ուսուցման գործընթացում, ԿԱԻ, Մանկավարժություն, Երևան, 2011:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980:
7. Выготский Л.С., Психология развития ребенка, Москва, 2003.
8. Седов И.А., Компьютерная игра как средство саморазвития будущего учителя в условиях информатизации общества, 2002,
9. Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս. և այլք: Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում /ձեռնարկ ուսուցիչների համար/, Եր., 2007թ., 320 էջ:
10. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա. և այլք, Ինտեգրված թեմատիկ միավոր /ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար/- Եր., 2003թ., 255 էջ
11. Դանիելյան Ա., Մաթեմատիկական հանելուկներ, Վանաձոր, 1998թ., 48 էջ:
12. Նախաշավիղ /գիտամեթոդական հանդես/, հ.1, Եր., ԿԱԻ, 2012թ., 64 էջ:
13. Թորոսյան Կ., Խաչատրյան Հ. և այլք, Տարրական դասարանների հայոց լեզու և մաթեմատիկա /ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր/, Եր., 2006թ., 148 էջ: